ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 3. 1964 Общественные науки

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ ՆՎԻՐՎԱԾ Տ. ՇԵՎՉԵՆԿՈՅԻ ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԻՆ

Հայ ժողովուրդը, ՍՍՌՄ եղբայրական ժողովուրդների և ամբողջ աշխարհի առաջավոր մարդկության հետ միասին տոնում է ուկրաինական ժողովրդի լավագույն զավակ, մեծ բանաստեղծ ու նկարիչ, ճորտատիրական իրավակարգի խիզախ հակառակորդ, ռևոլյուցիոն-դեմոկրատ Տարաս Շևչենկոյի ծննդյան 150-ամյակը։

Այդ նշանավոր տարեթվին էր նվիրված Հայկական ՍՍՌ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի 1964 թ. մարտի 9-ին կազմակերպված գիտական նստաշրջանը։

Նստաշրջանը բացեց Հայկական ՍՍՌ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Մ. Գ. Ներսիսյանը։ Նա նշեց, որ Շևչենկոյի կարճատև, բայց ժողովրդի ազատության ու երջանիկ ապագայի համար մղած պայքարով իմաստավորված կյանքը, նրա հուզաթաթավ և մարտաշունչ պոեզիան ուղղված էին հարազատ Ուկրաինան բզկտող ճորտատիրական խավար կարգերի դեմ։ Իր ստեղծագործության մեջ Շևչենկոն պատկերում էր աշխատավոր ժողովրդի ծանր ու նվաստացուցիչ պայմանները, փառաբանում ճորտ գյուղացիների ընդվզումը ցարական հարստահարիչների և տեղական կալվածատերերի կրկնակի լծի դեմ, քարոզում այն ճշմարտությունը, թե ազատությունը կարելի է նվաճել միայն ու միայն աշխատավորական մասսաների հեղափոխական պայքարով։

Ցարական կառավարությունը, անձամբ Նիկոլայ I կանգ չէին առնում որևէ միջոցի առաջ, որպեսզի լռեցնեն՝ ազատության ահեղ պատգամախոսին։ Սակայն ամենախիստ հսկողության պայմաններում անգամ մեծ Կորզարը կարողանում էր ստեղծագործել և հրավառ պոեզիայի ուժով սդնել ճորտ եղբայրակիցներին՝ զիտակցելու իրենց մարդկային արժանապատվությունը, պայքարելու լավագույն կյանքի համար։ Ահա թե ինչու Շևչենկոյի ստեղծագործությունը հասկանալի ու հարազատ է բոլոր այն ժողովուրդներին, որոնք պայքարում են հանուն ազատության և երջանիկ կյանքի։

*«Տարաս Շևչենկոն որպես մեծ հումանիստ-մտածող» թեմայով զեկուցեց ակադեմիկոս Ա. Բ. Կարինյանը**։

—Տարաս Շևչենկոն ապրել է 47 տարի,—ասաց զեկուցողը,—որից 24-ը անց է կացրել ճորտության կապանքներում, 10-ը՝ աքսորում։ Չնայած իր ողբերգական ճակատագրին և այդքան կարճատև ստեղծագործական կյանքին, նա կարողացավ կանգնել ժամանակի առաջավոր մտածողների շարքում, տաղանդի ամբողջ ուժով պրոպագանդեց ճորտատիրական իրավակարգի տապալման գաղափարը։

Շևչենկոն մեծ հայրենասեր էր. իր ժողովրդի վշտերն ու տառապանքները, հարստահարությունն ու ճնշված վիճակը ատելությամբ էին լցնում բանաստեղծի հոգին դեպի շահագործումն ու ամեն կարգի բռնակալություն։ Ինչքա՜ն անհանդիստ մտահոգություն կա աշխատավոր ժողովրդի զավակների ճակատագրի նկատմամբ «Ռատրակուհին», «Կատերինեն» պոեմներում, ինչպիսի՜ ոգևորություն ու թափ՝ հայրենիքի ազատագրության համար մղված պայքարը արտացոլող «Հայդամակները» պոեմում։ Շևչենկոյի ամբողջ ստեղծագործությունը համակված է ժողովրդի սոցիալական ու ազգային ստրկացման դեմ պայքարի տրամադրությամբ։

Սակայն ուկրաինական ժողովրդի պայքարը ճորտատիրական կարգերի ու ցարիզմի դաղութային քաղաքականության դեմ Շևչենկոն չէր առանձնացնում Ռուսաստանի մյուս ժողովուրդների ազատագրական պայքարից։ Նա տեսնում էր, որ նույն ճակատագիրն ունեն Ռուսաստանի բոլոր ժողովուրդները, որոնց համատեղ ջանքերով էլ պետք է տապալել ցարիզմը և ստեղծել ժողովուրդների ազատ ու անկախ եղբայրական ընտանիք։ Ահա «Կովկասս» սատիրապոեմը, որ-

* *Ակադեմիկոս Ա. Բ. Կարինյանի զեկուցումը տես «Տեղեկագրի» այս համարում։*

տեղ մեծ հումանիստը ծաղրում է ցարիզմի դաղութային քաղաքականությունը և կոչ անում կովկասյան ժողովուրդներին՝ պայքարել ազատ ու երջանիկ կյանքի համար։

Ակադեմիկոս Կարինյանը մատնանշեց Շևչենկոյի և ռուսական ռևոլյուցիոն-դեմոկրատների դաղափարական-քաղաքական անխզելի կապը, ցույց տվեց, որ ուկրաինական քաղաքացի բանաստեղծը պատկանում է Բելինսկու, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի և մյուս 60-ականների փայլուն համաստեղությանը։

«Շևչենկոն և հայ դրականությունը» թեմայով հանդես եկավ բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Գ. Արեշյանը։

Զեկուցողը հարուստ փաստերով ցույց տվեց այն պատվավոր դերը, որ կատարել է ուկրաինացի մարտիկ բանաստեղծը հայ և ուկրաինական ժողովուրդների դարավոր բարեկամության ու կուլտուրական կապերի ամրապնդման բնագավառում։ Դեռևս Հոկտեմբերյան հեղափոխությունից 40 տարի առաջ, Շևչենկոն ծանոթ է եղել հայ ընթերցողին «Բազմավեպ» էջերից, որտեղ 1879 թ. հայտնի դրականագետ Քուշնարյանը հանդես է եկել մեծ բանաստեղծին նվիրված հատուկ հոդվածով և միաժամանակ թարգմանություններ կատարել նրա ստեղծագործություններից։ Շևչենկոն միշտ էլ սիրով է ընդունվել հայ ընթերցողի կողմից, միշտ էլ հարազատ է եղել մեզ։ Եվ դա պատահական չէ։ Հայ ու ուկրաինական ժողովուրդների պատմական դառն ճակատագիրն այնքան նման էին, որ Շևչենկոյի ազատաշունչ պոեզիան դառնում էր միաժամանակ մեր ժողովրդի հույզերի ու ցանկությունների թարգմանը։

Ուշագրավ է այն հանգամանքը, որ երբ 1914 թ. ցարական կառավարությունը արգելեց Շևչենկոյի 100-ամյա հոբելյանը տոնելու, Ռուսաստանի բազմազգ մտավորականության հետ միասին հայ առաջավոր մտավորականները ևս արհամարհեցին հնարավոր ամեն մի վտանգ և իրենց խոսքը ասացին սիրված բանաստեղծի հիշատակին։

Մեծ Կոբզարը հայ ընթերցողների ամենալայն շրջանների սեփականություն դարձավ միայն Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո։ Բավական է նշել, որ վերջին քառորդ դարում Շևչենկոն հայերեն հրատարակվում է չորրորդ անգամ։

Հայ դրական միտքը Շևչենկոյին համարել է Ուկրաինայի Պրոմեթևսը (Հ. Սոլովյան), Ուկրաինայի զինված մարդարե (Ավ. Իսահակյան), Ուկրաինայի սիրտը (Գ. Սարյան)։ Ուկրաինական մեծ բանաստեղծի մասին գրված բազմաթիվ հոդվածները, ինչպես նաև դրականագետ Հ. Սալաթյանի արժեքավոր մենագրությունը խոսում են այն ջերմ ընդունելության մասին, որ Շևչենկոն գտավ հայ ժողովրդի մեջ։

«Շևչենկոն և արվեստը» զեկուցման մեջ արվեստի վաստակավոր գործիչ Ռ. Ռ. Դրամբյանը ներկայացնում է Շևչենկոյի թողած հարուստ ժառանգության մի այլ բնագավառ՝ նկարչությունը։

—Վաղ մանկությունից է Շևչենկոյի մեջ սեր առաջացել դեպի նկարչական արվեստը,— ասում է զեկուցողը։ Սակայն ճորտական վիճակը երկար ժամանակ հնարավորություն չէին տալիս ապագա մեծ բաղաքացուն՝ իրագործելու իր նվիրական ցանկությունը։ Վերջապես, Ժուկովսկու և նկարիչ Բրյուլովի ջանքերով, 1838 թ. Շևչենկոն ազատագրվում է ճորտությունից և հնարավորություն ստանում հաճախելու Պետերբուրգի գեղարվեստների ակադեմիայի դասընթացները։ 1844 թ. նա արժանանում է ազատ նկարչի կոչման։

Ինչպես պոեզիայում, այնպես էլ նկարչության մեջ Շևչենկոն առաջնորդվում էր ռեալիզմի դեղագիտական սկզբունքներով։ Նրա նկարների մեջ հիմնական տեղ են գրավում ճորտ գյուղացու, շարքաշ գեղջկուհու դառն վիճակի, ամեն կարգի նվաստացման ենթակա շարքային զինվորի կյանքի ցնցող պատկերները։ Այստեղ ևս Շևչենկոյին մղում է աշխատավոր ժողովրդին ինքնագիտակցության բերելու, ճորտատիրական խավար իրավակարգի դեմ նրանց պայքարի նախապատրաստելու վսեմ դաղափարը։

Ա. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ